Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝<< ՀՀ Վայոց Ձորի մարզի Հորբատեղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի Ֆիզիկական կուլտուրա (10 դասաժամ), ռուսաց լեզու (11 դասաժամ), թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (5 դասաժամ), կերպարվեստ (2,5 դասաժամ), երաժշտություն (2,5 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Այլ բնակավայրից մեկնող ուսուցչին տրվում է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի սեպտեմբերի 11 -ից մինչև սեպտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 26-ին՝ ժամը՝ 12:00-ին, ՀՀ Վայոց Ձորի մարզի Հորբատեղի հիմնական դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (099) 02-17-37 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրինություն

Digitally signed by SARGSYAN MIKAYEL
2911620011
Date: 2024.09.10 21:21:24 AMST